

«ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԵՐԿԵՈՍՈՒԹՅՈՒՆ»

Երիտասարդական միջազգային գիտաժողով

Գյումրի, 25-26-ը օգոստոսի, 2023

Գիտաժողովը կազմակերպվում է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի կողմից
ֆինանսավորվող N22YR-6B030 ծածկագրով «Շիրակի մանկական
բանահյուսությունը» գիտական թեմայի շրջանակում
(գիտական ղեկավար՝ Հ. Մատիկյան):

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

Մասնակիցների գրանցում	25 օգոստոսի, 2023թ., 10 ³⁰ -ին
Գիտաժողովի բացում	ժամը 11 ⁰⁰ -ին
Սուրճի ընդմիջում	ժամը 13 ³⁰ -14 ⁰⁰

Օրհնության խոսք

ՏԵՐ ՓԱՎՍՏՈՍ ԶԱՀԱՆԱ

Բացման և ողջույնի խոսքեր

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ- ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի տնօրեն, պ.գ.թ.

ՍԱՅՄՈՆ ԲՐՈՆԵՐ- ԱՄՆ, ամերիկացի նշանավոր

ֆոլկլորագետ, Միլուոկիի համալսարան

ՀԱՍՄԻԿ ՄԱՏԻԿՅԱՆ - ՇՀՀ կենտրոնի գիտաշխատող, Բ.գ.թ.

Գ Ի Տ Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Ն Ի Ս Տ՝

Նախագահողների՝

Հասմիկ Հարությունյան
Հասմիկ Մատիկյան

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հասմիկ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն

Ողբերգերի արդի դրսևորումները Շիրակում

2. ՀԵՅՍԸՆ Գանիելա (Ռումինիա)

Ստեֆան շել Մարեի համալսարան

Բանասիրության փարբերի (ան)թարգմանելիության մասին. Միհայ Էմինեսկուի «Făt-Frumos din Lacrimă»-ի հինգ անգլերեն փարբերակները

3. ՀԱԿՈԲՅԱՆ Անի (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

Օրորոցային երգն իբրև աշխարհաճանաչողություն

4. ՄԱՌՑՈԼԵ Գանիելա (Ռումինիա)

Ստեֆան շել Մարեի համալսարան

Մշակութային փոխանցում և բանասիրություն.

<<Բանփարկված կնոջ>> բալլադը

5. ՓԱՐՄԱԳԱՆՅԱՆ Սիրանուշ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԹԱԳԵՎՈՍՅԱՆ Թերեզա (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասին ավանդազրույցները՝ որպես

Յոհան Շիլլերերգերի ողբազրույցի արժեքավոր մաս

6. ԿՈՒՄԱՐ Գեվենդեր (Հնդկաստան)

Բարանասի համալսարան

Մշակութային հեգեմոնիա և կնոջ դերը Հարյանվիի

ժողովրդական երգերում

7. ՀՈՈՒԼԼԲՐՈՒՔ Քերի (Միացյալ Թագավորություն)

Հերթֆորդշիրի համալսարան

«Միրելի Չմեռ պապիկին» բանահյուսական սովորույթի հեղափոխում

8. ՄԱԶԳԱՌԻԵԼ ՌՈՐԵՐՍ (Միացյալ Թագավորություն)

Մեծ Բրիտանիայի բանահյուսական ընկերակցություն

Բանահյուսության ազդեցությունը անգլիական գրականության վրա

9. ԳՈԳԻԱՇՎԻԼԻ ԷԼԵՆ (Վրաստան)

Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի պետական համալսարան

Հեքիաթի տարրերը վրացական ավանդական մանկական

խաղերում

10. ԳՈԳՈԼՅԱՆ ԳՈՒՅԱՐ (Հայաստան)

Մեղրաձորի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային

կենտրոն

Երեխայի ադապտացումը աշխարհային միջավայրին՝

հասամշակմանն առնչվող բանահյուսական տեքստերում

11. ՄԱՏԻԿՅԱՆ Հասմիկ, ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Արեգնազ

(Հայաստան)

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն

ՎԱՐԳԱՆՅԱՆ Արմանուշ (Հայաստան)

Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

(Հայաստան)

Կոմիտասի մանկական երգերի միջգիտակարգային քննություն

(Շիրակի մանկական երգերի զուգադրմամբ)

12. ԴԱՎԹՅԱՆ Ստելլա (Հայաստան)

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու

մասնաճյուղ

Էթնոտերաժշտության արդի դրսևորումների շուրջ

13. ՅԱՍՈՅԱՆ Հեղինե (ՌԴ)

Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան

Եկեղեցու դերը երեխաների հոգևոր ու բարոյական զարգացման

և դաստիարակության գործում

14. ՄԱՏԻԿՅԱՆ Հասմիկ, ԹՈՒՄԱՅԱՆ ԳՈՒՅԱՐ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն

*Հիշողությունը՝ որպես մանկական բանասիրության
հիմնական բաղադրիչ Շիրակում
(Հայաստանի այլ ազգագրական շրջանների համադրությամբ)*

15. ՊԵՏՐՈՍՅԱՆ Լուսինե (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան
«Հոդալիո Ջան» զուգերգի զոցիալ-փնտրեսական հենքի մասին

16. ՍԱՀԱԿՅԱՆ Կարինե (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռոզա (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն

Էթնիկական մոդելները և սրերևութիւյերը մանկախաղաց երգերում ու
խաղերգերում

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հասմիկ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն, արվ.
գիտ. թեկնածու

ՈՂԲԵՐԳԵՐԻ ԱՐԴԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ

Շիրակի երաժշտական ժառանգությունը իր բացառիկ կարևոր տեղն ու դերն ունի հայ ազգային երաժշտական արվեստի զարգացման մեջ: Ժողովրդական հարուստ բանահյուսությունը, որ ներծծված էր Արևմտյան Հայաստանի երաժշտական բարբառներից ծնված ժանրային ոճական առանձնահատկություններով, ինքնատիպ հանգրվան գտավ Շիրակի տարբեր համայնքներում և շարունակեց կրել հայ ազգային ինքնության վառ տարրեր:

Զեկուցումը նվիրված է Շիրակի մարզում տարածում գտած ողբերգերին, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացնում ժողովրդական երաժշտական ստեղծագործության բավական բարդ այս ժանրի արդի դրսևորումների ուսումնասիրության գործում: Նկատի առնելով այն իրողությունը, որ ժամանակի հոլովությամբ առավել տուժել է վիպական բանահյուսությունը, հետևաբար սգո երգերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում հենց վիպականության տարրերի ու բնորոշիչների շնորհիվ:

Հիմնվելով Շիրակի տարածաշրջանում ներկայումս պարբերաբար իրականացվող բանահավաքչական աշխատանքների արդյունքների վրա, կարող ենք նշել, որ ողբական արարողությունն ու դրան ուղեկցող սգո երգերը Շիրակի տարածաշրջանում ոչ միայն պահպանել են իրենց ծիսական գործառույթները, այլև համատեքստի շնորհիվ հարստացել ու բազմազան են դարձել:

Մեր կողմից հավաքված նյութը ցույց է տալիս, որ ավանդական ողբերգերի ծիսական գործառույթից բխող կայուն ժանրային բնորոշիչներ, որոնք որպես հորինվածքային կարևորագույն բաղադրիչներ,

պահպանվել են նաև այսօր: Իբրև կայուն հորինվածքային մեխանիզմներ՝ այդ բաղադրիչները անվնաս են պահում բանահյուսական հորինվածքային ավանդական համալիրը՝ հնարավորություն տալով զգալու անհիշելի ժամանակներից մեզ հասած սզո երգերի ծիսական արտահայտչականությունը: Հայոց հինավուրց ողբական արարողությունը ժամանակի ընթացքում թեև փոփոխվել է, սակայն ծիսական կարևոր տարրեր փոխակերպվել ու յուրովի են արտահայտվել: Սա բանահյուսական երգաստեղծության շարունակական գոյատևման գրավականներից մեկն է:

ՀԵՅՍԸՆ Դանիելա

Ստեֆան շել Մարեի համալսարան
բան. գիտ. դոկտոր

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ

(ԱՆ)ԹԱՐԳՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

ՄԻՀԱՅ ԷՄԻՆԵՄԿՈՒԻ «FĀT-FRUMOS DIN LACRIMĂ»-Ի

ՀԻՆԳ ԱՆԳԼԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ֆոլկլորը, ինչպես հումորը, սովորաբար շատ է տարածվում: Մշակույթների մեջ բանահյուսական տարրերն առանձնանում են որպես մի լեզվից/մշակույթից մյուսին փոխանցվող ամենադժվար բաղադրիչներ: Սույն գեկուցման մեջ մենք նպատակ ունենք քննարկել բանահյուսական տարրերի (ան)թարգմանելիության հարցը ռումիներենից անգլերեն: Մեր համալիրը կազմված է մի հեքիաթից, որը Միհայ Էմինեսկին (1850-1889) հրատարակել է 1870 թվականին, և անգլերեն հինգ թարգմանություն, որ թողարկվել են 1991-2021 թվականներին: Հեղինակը միաձայն գնահատվել է որպես դափնեկիր բանաստեղծ ինչպես Ռումինիայում, այնպես էլ Մոլդովայում և միանշանակ գնահատվել է որպես ռոմանտիկ: Էմինեսկին մեծապես օգտվում էր բանահյուսությունից, հատկապես իր, այսպես կոչված, «վիեննական ժամանակաշրջանում» (1869-1872),

որը գենետիկ քննադատները համարում են առանցքային նրա գրական գործունեության մեջ: Թեև հեքիաթի ճշգրիտ ծագումը դեռևս լիովին բացահայտված չէ, սակայն պատմությունը որպես այդպիսին բավականաչափ վերախմբագրվել և նկարագարվել է, (հիմնականում երեխաների համար) և երբեմն փոխադրվել այլ լեզուների, որոնց մեջ անգլերենը շարունակում է գերիշխել: Մեր ուշադրության կենտրոնում են վերնագիրը և ներմշակութայնացված չորս տերմիններ (այսինքն՝ doină, horă, năframă, Muma Pădurilor) (1991, 1997, 2019, 2021):

ՀԱԿՈՒՅԱՆ Անի

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ
արվ. գիտ. թեկնածու

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳՆ ԻԲՐԵՎ ԱՇԽԱՐՀԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ

Օրորոցային երգը, որ երեխային դեպի քուն ուղեկցող գործառույթին ուղեկցող երաժշտաբանաստեղծական ժանր է համամարդկային երևույթ է՝ օրոր երգում են ամենուր ուր կա ծնունդ ու կյանք: Մյուս կողմից այն յուրաքանչյուր ազգի ավանդական, տիպական երաժշտամտածողությամբ առանձնացող և իրենում այդ տիպականը խիտ «գույներով» արտահայտող ժանրերից է: Այն, լինելով համամարդկային ֆենոմեն, ունենալով բազմաթիվ ընդհանրություններ, միևնույն ժամանակ, փաստորեն, հանդիսանում է որևէ ժողովրդի մշակութային ինքնության խորհրդանիշներից մեկը: Պատճառը, իհարկե ժողովրդական արվեստի փոխանցման միակ, բանավոր ճանապարհով սերունդների միջև երկխոսության «կամուրջն» է, որը հատկապես ավանդական արվեստի ակտիվ կենցաղավարման ժամանակաշրջանում եղել է ամուր ու անխախտ: Արդյունքում, ավանդական միջավայրն ապահովում էր սերնդափոխության բնական ընթացք, երբ որևէ մեկի համար երգված օրորը դառնում էր իր իսկ կողմից երգվող՝ հաջորդող սերնդի համար:

Կարելի է ասել, որ այս գործառույթն ուղեկցող երգերով է երեխան ճանաչում իրեն շրջապատող աշխարհն ու իրականությունը, հետևաբար որքան զիտակցված և գտարյուն լինի խնամողի, հայկական միջավայրում հիմնականում երեխայի մոր, կողմից ընտրված օրորոցայինն, այդքան ավելի ամուր կլինենք գոյաբանական պայքար հիշեցնող 21-րդ դարում առկա մարտահրավերների դեմ:

Վերջինիս հետ կապված կներկայացնենք մեր ուսումնասիրությունների արդյունքները և առաջարկները, որոնց հետևելու պարագայում կկարողանանք պահպանել ազգային դիմագիծն ու տեսակը, որը սկսվում է օրորոցից:

ՄԱՌՑՈՒԵ Դանիելա

Ստեֆան շել Մարեի համալսարան
բան. գիտ. դոկտոր

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ.

<<ԲԱՆՏԱՐԿՎԱԾ ԿՆՈՋ ԲԱԼԼԱԴ >>

Մեր հետազոտությունը կենտրոնացել է ռումինական բանահյուսության ամենահայտնի տեքստերից մեկին՝ <<Բանտարկված կնոջ բալլադը/Բալլադ բանտարկված կնոջ մասին>> և բալլադի տարբերակների միջև հարաբերությանը Բալկանյան թերակղզում: Տեքստի թեման է զոհաբերություն հանուն արարման: Մանուկ անունով մի տաղանդավոր որմնադիր բանտարկում է իր սիրելի կնոջը եկեղեցու պատի մեջ՝ գիշերով փրկումից խուսափելու նպատակով: Ռումինիայում հասարակության մեջ բալլադը մեծ տարածում գտավ 19-րդ դարի կեսին և միանգամից դարձավ ազգային արտոնված խորհրդանիշներից մեկը: Այնուամենայնիվ, Յակոբ Գրիմմի բալլադի սերբիական տարբերակի գերմաներեն թարգմանությունը խթանեց բալլադի միջազգայնացմանը: Մեր զեկուցման նպատակն է վերլուծել բալլադի տեքստի փոխանցման ճանապարհը աշխարհագրորեն երկրի տարբեր հատվածներ և Եվրոպա, ինչպես նաև փոխանցման ճանապարհը սերնդեսերունդ՝ սկսած 19-րդ դարից: Մինևույն

ժամանակ, մեր ուշադրությունը բևեռում ենք ազգային ձգտումների և սահմանների վրա, որոնք խոչընդոտեցին և՛ մշակութային տարրերի փոխանցմանը, և՛ ուսումնասիրողների օբյեկտիվ հետազոտությունը ոլորտում:

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ Սիրանուշ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ք.գ.թ.

ԹԱԳԵՎՈՍՅԱՆ Թերեզա

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ,
ասպիրանտ

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ՄԱՍԻՆ
ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՅՈՇԱՆ ՇԻԼՏԲԵՐԳԵՐԻ
ՈՒՂԵԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԱՄ՝**

Զեկուցումը նվիրված է գերմանացի ճանապարհորդ Յոհան Շիլտբերգերի ուղեգրության մեջ առանցքային արժեք ներկայացնող այն ավանդազրույցներին, որոնք ուղղակիորեն վերաբերվում են Հայաստանում քրիստոնեության տարածման հարցում մեծ դեր ունեցած Գրիգոր Լուսավորչին:

Զեկուցման նպատակն է քննել Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասին այն ավանդազրույցները, որոնք գերմանացի գրող Յոհան Շիլտբերգերը Հայաստանում եղած ժամանակ գրի է առել, հետազայում զետեղել է իր ուղեգրության մեջ և տպագրել:

Զեկուցման խնդիրն է, ներկայացնելով Հայաստանում քրիստոնեության տարածման գործում առանցքային դերակատարում ունեցած Գրիգոր Լուսավորչի՝ Շիլտբերգերի ուղեգրության, ապա նաև ընդհանրապես գերմանական աղբյուրներում տեղ գտած ավանդազրույցները, համեմատության մեջ դիտարկել հայկական աղբյուրների, մասնավորապես Ագաթանգեղոսի Հայոց պատմության նույնա-

¹ Հետազոտությունը իրականացվել է ՀՀ ԳԱԱ ֆինանսական աջակցությամբ՝ «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակներում, ծածկագիր՝ 22-YSSS-013:

բովանդակ հատվածների հետ:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գրական տեքստի վերլուծության պատմահամեմատական, կենսագրական, հերմենևտիկ, միֆոլոգիական և համադրական մեթոդները:

Զեկուցման արդիականությունը և գիտական նորոյթը պայմանավորված են հայ և գերմանական գրական կապերի վերհանմամբ, առնչությունների բացահայտմամբ:

Ամփոփելով՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ Գրիգոր Լուսավորչի մասին ավանդագրույցները լայնորեն տարածված են եղել Հայաստանում՝ քրիստոնեության հաստատմանը զուգընթաց: Այդ ավանդագրույցները ուշադրության և հետաքրքրության են արժանացել ինչպես հայ պատմիչների, հեղինակների և ստեղծագործողների կողմից, այնպես էլ՝ այլազգի: Շիլտերգերի ուղեգրության և գերմանալեզու գրականության մեջ ընդհանրապես Գրիգոր Լուսավորչի կերպարը ներկայացված է որպես Հայաստանում քրիստոնեության տարածման առաջամարտիկի: Ինչպես հայ գրականության մեջ՝ հինգերորդ դարից սկսած և իր ողջ զարգացման ընթացքում, գերմանալեզու գրականության մեջ ևս Լուսավորչի կերպարը անբաժան և միասնական է Հայաստանում քրիստոնեության տարածման պատմությունից:

ԴԵՎԵՆԴԵՐ ԿՈՒՄԱՐ

Հնդկաստանի Բանարասի համալսարան
բան.գիտ. դոկտոր

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵԳԵՄՈՆԻԱ և ԿՆՈՋ ԴԵՐԸ
ՀԱՐՅԱՆՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ**

Մերօրյա ժամանակներում հաստատված իրողություն է, որ հայր-իշխանությունը (պատրիարխատ) որպես պատմական և մշակութային սովորություն հեգեմոնիական ձգաններ և ճնշումներ է գործադրում կնոջ՝ ամենախոցելի սուբյեկտի վրա: Բանահյուսությունը՝ որպես մշակույթի գործոններից մեկը, արձանագրում է հայր-

իշխանության հեգեմոնիական միտումները, կանանց դիմադրությունը դրանց դեմ: Այս համատեքստում, Հարյանվի կանանց ժողովրդական երգերին բնորոշ են բանտարկության և փախուստի պատկերներ՝ առաջադրելով համառ հայրիշխանական գերակայության մոդել, ինչպես նաև կանանց էգալիտարիզմական աշխարհի բաղձանքը: Այս ժողովրդական երգերում հաճախադեպ են պարբերաբար կրկնվող պատկերներն ու փոխաբերությունները որպես անհնազանդության դրսևորումներ հայրիշխանության դեմ: Այլ կերպ ասած, Հարյանվի կանանց ժողովրդական երգերը մարմնավորում են ենթամշակույթի էական հատված՝ ծաղկող Հարյանվիի գերիշխող մշակույթի ներսում և մշակույթից դուրս: Այս զեկուցման նպատակն է ուսումնասիրել բնիկ Հարյանվի գյուղական ժողովրդական երգերի տեսակը՝ Ջակարին՝ իբրև կանանց ենթամշակույթի արտացոլանք Հարյանայում՝ թաքնված հաճոյակատար հայրիշխանական մշակույթի քողի տակ, ինչը արժեզրկում և հալածում է այն աննկատորեն:

ՀՈՈՒԼԲՐՈՒՔ Քերի

Մեծ Բրիտանիայի Հերթֆորդշիրի համալսարան

<<ՄԻՐԵԼԻ ՁՄԵՌ՝ ՊԱՊԻԿԻՆ>> ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Այս զեկուցմամբ անդրադարձել ենք Ձմեռ պապիկին ուղղված նամակագրության բանահյուսական սովորույթին և արևմտյան այլ անձնավորումներին Սուրբ Ծննդյան տոնի ժամանակ. ե՞րբ է ծագել, բանահյուսական ի՞նչ ակունքներ ու սովորույթներ ունի: Եվ, ի վերջո, կարո՞ղ ենք արդյոք բացահայտել մանկանց պատկերացումներն և ընկյալումները մշակույթային պատմական զարգացման ընթացքում: Բարեբախտաբար, Ձմեռ պապիկին ուղղված նամակներից բավական դրվագներ հայտնվել է Հյուսիսային բևեռում արխիվում:

ՄաքԴԱՌԻԵԼ Ռոբերտ

Լոնդոնի բանահյուսական ընկերակցություն

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱԶԳԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Բանահյուսությունը ժողովրդի գեղարվեստական ստեղծագործություն է, որը փոխանցվում է սերնդեսերունդ, սովորաբար բանավոր կերպով: Ավանդաբար բանահյուսությունը բանավոր պատումների կենսունակ ժանր է: Ժամանակակից բանահյուսությունը ընդգրկում է ստեղծագործական մի շարք ձևեր՝ ինչպիսիք են ժողովրդական արվեստը, ժողովրդական երգերն ու պարերը, լեգենդները, առասպելները, մանկական ստեղծագործությունները և ասացվածքները: Բանահյուսության դերը մշակութային խմբերի ավանդույթների փոխանցման գործում էական է: Այս գեղուցումը ուսումնասիրում է բանահյուսական թեմաները՝ արտահայտված անգլերեն գրականության մեջ՝ սկսած Ջեֆրի Չոսերից մինչև ժամանակակից անգլալեզու գրականություն: Թեմատիկ առումով առնչվում է ընդհանուր պատմության խնդիրներներին ու պատկերասիմվոլային համակարգին, ինչպիսիք են գերբնական նվիրատուները և օգնականները: Գրական հերոսներին առաջադրվում են խնդիրներ, որոնք պետք է հաղթահարվեն ու լուծվեն: Նրանք շրջապատված են կախարդանքով և հրաշագործություններով: Հաճախադեպ են այնպիսի թեմաները, որտեղ լավը միշտ պարզևատրվում է, վատը՝ պատժվում, իսկ սերը հաղթահարում է ամեն մի խոչընդոտ:

**ՀԵՔԻԱԹԻ ՏԱՐԻԵՐԸ ՎՐԱՑԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ**

Վրացական ավանդական խաղերը առնչվում են առօրյա կյանքին և միևնույն ժամանակ ներկայացնում են վրացական ժողովրդական հեքիաթների և առասպելների զանազան կողմեր: Ըստ վրացական ազգագրական ուսումնասիրության՝ մանկական խաղում կարելի է նկատել փոխակերպումների ժամանակների տարբեր շերտեր: Խաղերի բովանդակությունը թվում է իրատեսական և ժամանակ առ ժամանակ սարսափելի, բայց և այնպես ունեն պատմական ճշմարիտ նկարագիր՝ հնարավոր փոփոխակներով: Ժամանակի ընթացքում բանավոր փոխանցվելիս մանկական խաղերը փոփոխություններ են կրել և՛ արտաքին, և՛ ներքին առանձնահատկություններով նման լինելով հեքիաթներին:

1. Երկուսն էլ հակառակ կողմերի մրցակցություն են և ժամանցի ինչ-որ ձև:

2. Եվ՛ հեքիաթը, և՛ խաղը ունեն իրենց համատեքստը և գոյության ձևը: Հեքիաթը տեքստ է, ինչը պատմվում կամ գրի է առնվում, իսկ խաղը իրականացվում է դեմ դիմաց:

Խաղը և հեքիաթը ունեն մի շարք տարբերություններ: Հեքիաթը ունի որոշակի կառուցվածք՝ լավ ավարտով: Խաղը իր հերթին կատարում է, որի ժամանակ միշտ չէ, որ հնարավոր է ի սկզբանե հաշվարկել խաղի ավարտը: Նույն խաղը կարող է առաջացնել իրարից շատ տարբեր հակազդեցություններ:

Ջեկուցումն անդրադարձ է վրացական մանկական խաղի, ինչը պարունակում է լույսի և խավարի գաղափարի գաղափարի նշույլներ, որը բնորոշ է ազրարային շրջաններում կենցաղավարող հավատքի ձևերին:

ՄԱՏԻԿՅԱՆ Հասմիկ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն, բան.
գիտ. թեկնածու

ՎԱՐԴԱՆՅԱՆ Արմանուշ

Երևանի պետական Կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Արեգնազ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն

ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ

ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(ՇԻՐԱԿԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԶՈՒԳԱԴՐՄԱՄԲ)²

Հայ մեծանուն երգահան, կոմպոզիտոր Կոմիտաս վարդապետի երաժշտական ժառանգության մեջ առանձնանում է վարդապետի մանկական երգերի պարզ ու մաքուր աշխարհը: Նրա երգերը բազմաժանր են ու բազմաբովանդակ և յուրաքանչյուր հայ, աշխատավոր ժողովրդի գավակ կարող է գտնել իր առօրյային, մտահորիզոնին ու աշխարհընկալմանը հարազատ երգեր ու ելևէջներ Կոմիտաս վարդապետի ստեղծագործություններում կամ ժողովրդից գրի առած երգերում: Բացառություն չեն նաև նրա մանկական երգերը, որոնք լի են բնությանը, կենդանիներին նկարագրող/գովերգող պատկերներով, սակայն Կոմիտասը սուկ չի նկարագրում, նա սեր է սերմանում դեպի բնությունը, արդարը, պարզն ու հովվերգականը: Մեծանուն վարդապետի մանկական երգերից են «Լորիկ», «Կաքավիկ», «Ջան գառնուկ», «Այ իմ գնդակ», «Ջրալիկ-զրալիկ», «Գացեք տեսեք», «Փայտե ձիուկ» և այլն:

Զեկուցման մեջ անդրադառնալու ենք Կոմիտասի «Փայտե ձիուկ» ստեղծագործությանը՝ միջգիտակարգային զուգահեռներ տանելով Շիրակի մանկական երգերի հետ:

² Հետազոտությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 22YR-6B030 ծածկագրով «Շիրակի մանկական բանահյուսությունը» գիտական թեմայի շրջանակներում:

ԴԱՎԹՅԱՆ Ստեղծ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
Գյումրու մասնաճյուղ

ԷԹՆՈՒԵՐԱԺՇՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Էթնոերաժշտագիտությունը անցել է ձևավորման տևական փուլերով՝ որպես գիտության ինքնուրույն ճյուղ վերջնականապես ձևավորվելով 19-րդ դարում:

Մինչ օրս համակարգչային էթնոերաժշտագիտության շրջանակներում ձևավորվում են հետազոտության մի քանի ոլորտներ.

1. Կառուցվածքային-վերլուծողական ուղղություն, որը որոշում է երաժշտության կառուցվածքը, հնչյունաբարձրությունները, համահնչյունային հաջորդականությունը (որոշ պոլիֆոնիկ ժողովրդական ստեղծագործություններում), կատարողական առանձնահատկությունները և այլն:

2. Համեմատական և պատմահամեմատական ուղղություն, որը միտված է համեմատելու տարբեր երաժշտական մշակույթների բնորոշ մեղեդիները դրանց վերլուծությամբ բացահայտելու պատմական զարգացման ընթացքում կատարված փոփոխությունները:

3. Փորձագիտական ուղղություն, որի շրջանակներում կատարվում է տարբեր մեղեդիների նախաստիպերի որոնում:

Չնայած իր բազմաթիվ առավելություններին՝ համակարգչային էթնոերաժշտագիտությունը զերծ չէ որոշակի խնդիրներից: Հիմնական մարտահրավերներից մեկը ժամանակակից համակարգչային մեթոդները ավանդական երաժշտագիտական մոտեցումների հետ հավասարակշռելու անհրաժեշտությունն է: Թեև թվային գործիքները կարող են աներևակայելի օգտակար լինել մեծ քանակությամբ երաժշտական տվյալների մշակման համար, դրանք չեն կարող փոխարինել այն պատկերացումներին, որոնք կարելի է ձեռք բերել դաշտային աշխատանքի մեջ անմիջական ներգրավվածությամբ:

Բացի նշվածներից, այսօր ջանքեր են գործադրվում ստեղծելու

ավելի ընդհանրացված համակարգեր, օրինակ, էթնոերաժշտագիտական թվային գրադարաններ, որոնք թույլ կտան տարբեր երկրների հետազոտողներին գտնել իրենց հետաքրքրող նյութը: Նման թվայնացված երաժշտական գրադարաններ ստեղծվել են Անգլիայում՝ «Բրիտանական ձայնային արխիվի գրադարան» (British Library Sound Archives, Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ «Սմիթսոնյան ժողովրդական ուղիներ» (Smithsonian folkways) [12], Աֆրիկայում՝ «Աֆրիկյան երաժշտության միջազգային գրադարան» (International Library of African music):

Նշենք նաև, որ համակարգչային էթնոերաժշտագիտությունը արագ զարգացող ոլորտ է և ավանդական երաժշտության ուսումնասիրությունների մասին պատկերացումները հեղափոխելու մեծ ներուժ ունի:

ՅԱՍՈՅԱՆ Հեղինե

Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան

ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ - ԲԱՐՈՅԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ԴԱՏՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կասկած չկա, որ երեխայի անձի ձևավորման վրա մեծ ազդեցություն է գործում նրա բարոյահոգեբանական, կրոնական դաստիարակությունը: Խոսելով երեխայի դաստիարակության հարցում կրոնի նշանակության մասին՝ հոգեբանները պնդում են, որ քրիստոնեությունը կենտրոնանում է բարոյականության վրա, որն, իր հերթին, երեխաների մեջ սերմանում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են խոնարհությունը, հայրենասիրությունը, սերը մերձավորների հանդեպ և ամենակարևորը՝ սերը առ Աստված: Կրոնը թույլ է տալիս երեխային յուրացնել *բարու* և *չարի* հասկացությունը, դեռահաս տարիքում առաջացած խնդիրների դեմ պայքարել քրիստոնեական արժեքների միջոցով: Պակաս կարևոր չէ այն, որ հոգևոր և բարոյական դաստիարակությունը կարող է կանխարգել այնպիսի խնդրի

առաջացումը, ինչպիսին է «հայրերի և երեխաների» խնդիրը, որն անհանգստացրել է մարդկանց տարբեր ժամանակներում, ու ժամանակակից կյանքում առավել սուր է արտահայտվում:

Անշուշտ, երեխայի հոգևոր ձևավորման հարցում մեծ դեր է վերապահվում եկեղեցուն: Եկեղեցին, լինելով այն ինստիտուտը, որը ներկայացնում, պաշտպանում և տարածում է կրոնը, պետք է հանդես գա որպես մարդու հոգևոր դաստիարակ՝ սկսած ամենավաղ մանկությունից մինչև կյանքի վերջ: Այս ուսումնասիրության մեջ փորձ է արվում բացահայտելու Եկեղեցու ազդեցության առանձնահատկությունները երեխաների մշակութային և հոգևոր զարգացման վրա միսիոներական և կրթամշակութային ծրագրերի միջոցով:

ՄԱՏԻԿՅԱՆ Հասմիկ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, բան.
գիտ. թեկնածու

ԹՈՒՄԱՍՅԱՆ Գոհար

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ ՇԻՐԱԿՈՒՄ³

(Հայաստանի այլ ազգագրական շրջանների համադրությամբ)

Սույն զեկուցմամբ անդրադառնում ենք հիշողության ուսումնասիրությանը՝ որպես մանկական բանահյուսության կարևոր բնութագրիչի: Բանահյուսական նյութերը մեծ մասամբ ճամփորդում են հիշողության միջոցով՝ գիտակարգային հայեցակետի համաձայն:

Ըստ շվեյցարացի հոգեբան Կարլ Յունգի՝ կոլեկտիվ անգիտակ-

³ Հետազոտությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 22YR-6B030 ծածկագրով «Շիրակի մանկական բանահյուսությունը» գիտական թեմայի շրջանակներում:

ցականը վերաբերում է այն գաղափարին, որ ամենախոր անգիտակցական մտքի մի հատվածը գենետիկորեն ժառանգված է և չի ձևավորվում անձնական փորձով: Մեր նպատակն է դասակարգել ավանդական մանկական երգերը, որոնք ունեն որոշակի տեղական հատկանիշներ և տեղային հիշողություն՝ խորամուխ լինելով Հայաստանում տարածված, համամարդկային նշանակություն ունեցող և հավաքական հիշողության մաս կազմող մանկական տեքստերի մեջ:

Ուսումնասիրության հորիզոնում են մեր կողմից գրառված Շիրակի մարզի մանկական բանահյուսության նյութերն ու արխիվային վկայումները: Հավաքական հիշողության արժեքն ու նշանակությունը վեր հանելու համար վերլուծել ենք Հայաստանի երեք մարզերի՝ Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի բանահյուսական տեքստերը: Տեքստերը քննել ենք ինչպես կառուցվածքային, այնպես էլ իմաստային տեսանկյուններից:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Լուսինե

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
պատ. գիտ. թեկնածու

«ՀՈՒԿԱԼԼՈ ՋԱՆ» ԶՈՒԳԵՐԳԻ ԶՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Սույն գեկուցման քննության առարկան «Հողալլո ջան» ժողովրդական երգն է՝ ավելի ստույգ, նրա սկզբնամասը: Ժողովրդական այս երգի սոցիալ-տնտեսական հենքը բացահայտում են նրա առաջին և երկրորդ տողերը «Հո՛ղալլո ջա՛ն, հո՛ղալլո ջա՛ն, հո՛ղալլո, /Աղջի՛կ սրի՛ռն, աղջի՛կ անուշ, դալալլո»:

Տպագիր տեքստում *հողալլո* և *դալալլո* բառերը փոքրատառով են բերված: Ըստ երևույթին, դա գալիս է երգն հաղորդողից, որը դրանք անհասկանալի բառեր է համարել: Հետազոտությունը գրվել է պատմահամեմատական մեթոդի կիրառումով, նյութերից են ինչպես

հայկական ժողովրդական «Հողալիտ ջան» երգը և ասացվածքներից մեկը, այնպես էլ շումեր-աքադական առասպելաբանությունից հայտնի Լախար և Աշնան աստվածությունների և հին հրեաների աստվածաշնչային եղբայրներ Աբելի ու Կայենի մասին ավանդազրույցը: Մեր վերլուծության առարկան են դարձել երգի հողալիտ և դալալիտ բառերը, որոնք ծագում են այն նույն նախատիպերից, ինչ հօտաղ և դալար բառերը: Հողալլոյի և Դալալլոյի կերպարներն իրենց զուգահեռներն ունեն առաջավորասիական այնպիսի մշակույթներում, ինչպիսիք են շումեր-աքադականը և հին հրեականը: Մեր կարծիքով, *հողալլո*-ն և *Դալալլո*-ն անձնանվանաբար կիրառված հնագույն դասային անվանումների փոքր-ինչ ձևափոխված հետնորդներն են: *Հողալլո*-ն վերաբերում է անասնապահությունը ներկայացնող երիտասարդ տղամարդուն, իսկ *Դալալլո*-ն՝ բուսաշխարհը ներկայացնող և տղային դիմող աղջկան:



ՍԱՀԱԿՅԱՆ Կարինե

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, հոգ.
գիտ. թեկնածու

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռոզա

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն

ԷԹՆԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ ԵՎ ՍՏԵՐԵՈՏԻՊԵՐԸ

ՄԱՆԿԱԽԱՂԱՑ ԵՐԳԵՐՈՒՄ ՈՒ ԽԱՂԵՐԳԵՐՈՒՄ

Գոյություն ունեն վարքի ազգային և համամարդկային մոդելներ, որոնք ուշագրավ դրսևորումներ են ստանում մանկախաղաց երգերում ու խաղեր-գերում: Վարքի համամարդկային ստերեոտիպերը յուրաքանչյուր էթնոսի մակարդակում ունեն իրենց յուրահատկությունները:

Կենսահոգեկան ժառանգականության համաձայն՝ վարքի մի շարք ձևեր, ծագելով խաղերի մեջ, տարածում են գտնում մեր կենսական տիրույթում՝

իրբն աշխարհաճանաչման միջոց: Խաղի և խաղերգերի մեջ մենք իրացնում ենք որոշակի սոցիալական դերեր՝ արտացոլելով մեր էթնոսի խառնվածքի խնդիրը: Անշուշտ, սրանցում ստերեոտիպացվում են էթնիկական վարքի առավել նշանակալի տեսակները՝ որպես նախնեղակ մտածողության ձևեր, որոնք նպաստում են ողջ էթնոսի հարմարմանը: Երեխան խաղի ու խաղերգերի միջոցով արտացոլում է ներկա պահի նկատմամբ իր հուզական վերաբերմունքը:

Բոլոր դեպքերում խաղերն ու խաղերգերը, լինելով անձի հոգևոր պահանջմունքների բավարարում, իրենց նախնական մոտիվացիայի մեջ հասցեագրված են մինչև իսկ դեռ չծնված երեխային /օրինակ՝ սեռին առնչվող տարբեր երգերի հորինում, մաղթանք-բանաձևերի կիրառում, գունաբաժանում՝ երկնագույն-վարդագույն և այլն/:

Ստերեոտիպ վարքը շատ հին է. յուրաքանչյուր նոր սերունդ կարող է ունենալ իր հոգևոր պահանջմունքը՝ որոշակի մեկնաբանություն տալով պատմամշակութային զարգացման ընթացքում պարբերաբար կրկնվող խաղերին ու մանկախաղաց երգերին: Ուշագրավ է, որ եթե անգամ մոռացված է ծիսական բանաձևի ստեղծման մոտիվը, ապա ամեն մի նոր սերունդ ունի դրա բացատրությունն ու հիմնավորումը, որ երբեմն բուն տեքստից կարող է հեռացված լինել: Ավանդական կաղապարաձևը ծրագիր է ու մոդել, որը դրսևորվում է էթնոսի խաղային վարքում: Խաղերգերում՝ տեքստային դրսևորումների մեջ, երբեմն առկա է ավանդական կաղապար-վարք կապը, որի մեջ էլ՝ լեզու-խոսք-կող-հաղորդակցում-թաքուն վարք /իմա՝ հաշվերգեր/-բացահայտ վարք առնչակցություններն են: Այդ նշանակում է, որ ստերեոտիպ վարքի բոլոր ձևերը՝ ավանդույթներ, սովորույթներ, սոցիալականացման հնարներ, արհեստավարժ վարքի զանազան ձևեր, ինքնապաշտպանական գործառույթ են իրականացնում անձի կյանքում և հզորացնում են երեխայի *ես*-ը:

Էթնիկական ստերեոտիպերը, որոնք կարող են լուծել անձի ներհոգեկան կոնֆլիկտներ և արտահայտված են վաղագույն երգերում /հատկապես մանկանց հասցեագրված կամ նրանց կողմից կատարվող/, սոցիալական դիրք-որոշումների յուրահատուկ տեսակներ են, թեև շատ կայուն, բայց ենթակա են շարունակական փոփոխությունների:

Էթնիկական ստերեոտիպերը սերտորեն կապված են անձի էթնիկական *ես*-կոնցեպցիայի և հոգնակարագրի հետ, որոնք բավականին տպավորիչ են էթնոսի մակարդակում:

Սույն զեկուցման մեջ կանդրադառնանք մանկախաղաց երգերին, հաշվերգերին ու խաղավարտի երգերին՝ կապված որոշակի խաղային

գործողությունների հետ, մանկական քայլքի ու լոզանքի երգերին, դրանց կենցաղային գործառույթի, կատարման ձևերի, նաև՝ մանկախաղաց երգերի քանաստեղծական համակարգի առանձնահատկություններին, երգերում արտահայտված հիմնական գաղափարին: Ըստ էության, կրնոթագրենք խաղն ու խաղերգերը՝ որպես մեծ աշխարհի իրական կյանքի միկրոմոդել:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն
2. ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ
3. ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
4. Սուչավայի Ստեֆան շել Մարեի համալսարան
5. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ
6. Հերթֆորդշիրի համալսարան, Միացյալ Թագավորություն
7. Լոնդոն, Բանահյուսական ընկերակցություն
8. Հնդկաստանի Բանարասի համալսարան
9. Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի պետական համալսարան
10. Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան
11. Մեդրաձորի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն
12. Մ. Նալբանդյանի անվան Շիրակի պետական համալսարան

CONFERENCE PROGRAM
"DIALOGUE ACROSS CULTURES"
INTERNATIONAL YOUTH CONFERENCE

GYUMRI 25-26

AUGUST 2023

The conference was supported by the Science Committee of RA, in the frames of the research project №22YR-6B030 – "Children Folklore of Shirak"(supervisor: Hasmik Matikyan)

CONFERENCE SCHEDULE

Registration: 25 August, 2023, at 10:30

Opening Ceremony: at 11.00

Coffee break: at 13.30-14.00

Blessing speech

Ter Pavstos Priest

Welcome Speech

ARMEN HAYRAPETYAN- Director of SCAS of the NAS RA, PhD in History

SIMON BRONNER- USA, American distinguished folklorist, University of Wisconsin

HASMIK MATIKYAN- researcher, SCAS of the NAS RA, PhD in Philology

CONFERENCE SESSION

Presidents: **Hasmik Harutyunyan**
Hasmik Matikyan

1. HARUTYUNYAN Hasmik (Armenia)

SCAS NAS RA

Modern Manifestations of Lamentations in Shirak region

2. HĂISAN Daniela (Romania)

“Ștefan cel Mare” University of Suceava

On the (Un)Translatability of Folkloric Elements: Five English Versions of Mihai Eminescu’s “Făt-Frumos din Lacrimă
